ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Եդիգարյան Քնարիկ Կառլենի**

# ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

**Ը.00.06-«Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

## ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2024

**Ատենախոսության թեման հաստատվել է**

**Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում**

**Գիտական ղեկավար՝** Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
**Դիանա Ռոբերտի Գալոյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
**Դավիթ Ներսիկի Հախվերդյան**

Տնտեսագիտության թեկնածու
**Լուսինե Կառլենի Սարգսյան**

**Առաջատար կազմակերպություն՝** **Միքայել Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024թ. հուլիսի 4-ին, ժամը 15.00-ին, ՀՀ ԲԳԿԳ-ի՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Մ. Նալբանդյան 128

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024թ. մայիսի 21-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,**
**Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր** **Տ.Ս. Մարտիրոսյան**

## Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

**Հետազոտական աշխատանքի արդիականությունը:** Աշխարհի առաջատար երկրների զարգացումը հանգեցրեց հետարդյունաբերական տնտեսական համակարգի ձևավորման, որը հիմնված է գիտելիքների, նորարարության, գլոբալ տեղեկատվական համակարգերի, կրթության նոր որակի, նոր տեխնոլոգիաների վրա: Նոր տնտեսության հիմնասյուներից է մարդկային կապիտալը (այսուհետ՝ ՄԿ), որը ժամանակակից հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն գործոն է:

ՄԿ-ի բարձր դերակատարումը, դրա կառուցվածքի և գործառույթների ընդլայնումը, հասարակության զարգացման գործոնից վերափոխումը արտադրական և սոցիալական առաջատար գործոնի հանգեցրեց նոր հայեցակարգի ձևավորման անհրաժեշտության, քանի որ ի տարբերություն արտադրության այլ գործոնների, որոնք ԳՏԱ ազդեցության ներքո փոփոխվում են քանակապես և որակապես, սակայն բովանդակային իմաստով մնում են նույնը, ՄԿ-ը փոփոխվում է նաև, ըստ էության, և ինքնին է գեներացնում նոր գիտելիք: Ըստ այդմ՝ 21-րդ դարի ՄԿ-ի էության և դերի ընկալումը վերափոխվում է: Տեղեկատվական հեղափոխությունների դարաշրջանում ՄԿ-ի կուտակման և զարգացման անհրաժեշտությունը իր արտացոլումն է գտել զարգացած երկրների տնտեսական քաղաքականության առաջնահերթություններում:

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես բնական պաշարներով աղքատ, ոչ արդյունաբերական և աշխարհագրական անբարենպաստ դիրք ունեցող երկիր, իր տնտեսական զարգացման հիմքում պետք է հենվի ՄԿ-ի վրա, քանի որ ժամանակակից աշխարհում տնտեսությունների մրցունակությունը կախված է ՄԿ-ի որակից և կիրառման արդյունավետությունից: Եթե 100 տարի առաջ աշխարհի առաջատար կորպորացիաները արդյունաբերական հսկաներ էին, ապա այսօր առաջատար տասնյակի մեջ գերակշռում են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հսկաները:

Վերջապես, թեման արդիական է ՄԿ-ի միջազգային շարժի տեսանկյունից: ՄԿ-ի միջազգային հոսքերի վերաբերյալ հետազոտությունները համաշխարհային գրականության մեջ դեռևս քիչ են: Քանի որ ՀՀ-ն հանդիսանում է ՄԿ «արտահանող» երկիր, անհրաժեշտություն է ծագում ուսումնասիրելու, թե որքանով է ազդում ՄԿ-ի արտահոսքը տնտեսության վրա, և ինչ հետևանքներ է կրում տնտեսությունը վերոնշյալ երևույթից:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության նպատակն է բացահայտել ՄԿ-ի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում համաշխարհային տնտեսության գլոբալացման համատեքստում, պարզել ՄԿ-ի և միգրացիայի փոխառնչությունները: Վերոնշյալ նպատակին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել ՄԿ-ի էությունը և «մարդկային կապիտալ» եզրույթի էվոլյուցիան,
- քննարկել ՄԿ-ի տեսակները և դրանց դասակարգման մոտեցումները,
- հետազոտել ՄԿ-ի գնահատման մեթոդաբանական հիմքերը,
- բացահայտել ՄԿ-ի քանակական և որակական զարգացման միտումները համաշխարհային տնտեսությունում,
- վերհանել ՄԿ-ի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում,
- բացահայտել ՀՀ-ում ՄԿ-ի զարգացման հեռանկարները համաշխարհային տնտեսության միջազգայնացման համատեքստում,
- վերլուծել ՄԿ-ի դերը ՀՀ տնտեսության միջազգայնացման գործընթացում:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը ՄԿ-ի միջազգայնացման հիմնախնդիրներն են ՀՀ-ում, իսկ առարկան ՀՀ ՄԿ-ի և միգրացիայի փոխառնչությունները:

**Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:** Առաջադրված խնդիրների լուծման համար տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմք են հանդիսացել ՄԿ-ի վերաբերյալ տարբեր ժամանակաշրջաններում օտարերկրյա և հայ տնտեսագետների աշխատությունները, միջազգային կազմակերպությունների տվյալ խնդիրներին առնչվող հաշվետվություններն ու հրապարակումները, պաշտոնական տեղեկագրերն ու փորձագիտական գնահատականները, տվյալ դաշտը կարգավորող ՀՀ իրավական ակտերը, ՀՀ պետական մարմինների կողմից հրապարակված հաշվետվությունները, ՀՀ և այլ պետությունների վիճակագրական ծառայությունների հրապարակումները:

Աշխատանքի նպատակին հասնելու համար կիրառվել են տեսական հետազոտության (Theoretical Research Method), գիտական վերացարկման, համեմատական վերլուծության և սինթեզի մեթոդները: ՄԿ-ի միջազգային շարժի և տնտեսության փոխառնչությունների բացահայտման համար կիրառվել է պանելային վեկտորային ավտոռեգրեսիոն մոդել (Panel Vector Autoregressive Model): Մոդելի վերլուծությունը իրականացվել է Eviews ծրագրային փաթեթի միջոցով: Կատարվել են պահանջվող թեստերը մոդելի որակը ապահովելու նպատակով: Այնուհետև, կատարվել է մոդելի փոփոխականների ազդակների և պատասխանների մանրամասն վերլուծություն իմպուլսային արձագանքների և դրանց շեղումների տարրալուծման Քոլեսկիի մեթոդով:

Մոդելի տվյալների բազան հիմնված է ՄԱԿ-ի, Յունեսկոյի, Աշխատանքի միջազգային կազմակերպության, ՏՀԶԿ-ի տվյալների հիման վրա:

**Հետազոտության գիտական նորույթը:** Իրականացված հետազոտությունների և վերլուծությունների հիման վրա ստացված արդյունքներից որպես գիտական նորույթ առանձնացվել են հետևյալները՝

- Իրականացվել է մարդկային զարգացման և մարդկային կապիտալի համաթվերի համեմատական վերլուծություն, ինչի հիման վրա մշակվել է ՄԿ-ի համաթվի հաշվարկման նոր եղանակ:
- Որոշվել է (առաջարկվել է) ՀՀ ՄԿ-ի միգրացիայի վրա ազդող ցուցանիշների համակարգ, հաշվարկվել դրանց մեծությունը ՀՀ և ռեցիպիենտ երկրների համար:
- Գնահատվել է ՀՀ մարդկային կապիտալի միգրացիայի վրա ՀՀ և ռեցիպիենտ երկրների տնտեսական ցուցանիշների միջև ճեղքի ազդեցության չափը, և հակառակը՝ միգրացիայի ազդեցության չափը ՀՀ և ռեցիպիենտ երկրների միջին աշխատավարձների ճեղքի, մարդկային կապիտալի թերօգտագործման ճեղքի, աշխատաշուկայում ներգրավվածության ճեղքի և ՄԿ մեծության ճեղքի վրա:
- Գնահատվել է ՀՀ և ռեցիպիենտ երկրների ՄԿ-երի միջև ճեղքը՝ պայմանավորված եկամուտների, աշխատուժի թերօգտագործման և աշխատաշուկայում ներգրավվածության մակարդակների տարբերություններով՝ կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքներով:

**Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը:** ՄԿ-ի միջազգային շարժի վերաբերյալ կատարված հետազոտությունը և դրա հետևանքների քանակական չափումները կարող են օգտակար լինել ՄԿ-ի զարգացմանը միտված քաղաքականության մշակման, կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության ոլորտներում բարեփոխումների իրականացման գործընթացումը: Աշխատանքի արդյունքները

հնարավորություն են ստեղծում մշակել միգրացիոն քաղաքականություն ի նպաստ ՀՀ տնտեսությանը, ինչպես նաև կարգավորել աշխատաշուկայի ինստիտուցիոնալ միջավայրը ՄԿ-ի արտահոսքի կանխարգելման նպատակով:

**Ատենախոսության արդյունքների փորձարկումն ու հրապարակումները:** Աշխատանքում կատարված հետազոտությունները, ուսումնասիրությունները, քանակական գնահատումները քննարկվել են ՀՊՏՀ Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի նիստերի, «ՀՀ տնտեսության զարգացման առաջնահերթությունները» խորագրով ՀՊՏՀ 28-րդ գիտաժողովի, 2023թ. ՌԴ-ում կայացած «Նոր գիտություն» գիտական համագործակցության միջազգային կենտրոնի 3-րդ միջազգային գիտագործնական համաժողովի, Թբիլիսիի Գ. Ռոբակիձեի համալսարանի կողմից կազմակերպված 2022թ. ասպիրանտների միջազգային գիտաժողովի ընթացքում: Արդյունքները հրապարակվել են հեղինակի 9 հոդվածներում:

**Աշխատանքի կառուցվածքը:** Աշխատանքը կազմված է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններ և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքը շարադրված է՝ 139 էջի վրա, ներառում է 22 աղյուսակ և 19 գծապատկեր:

## Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Աշխատանքի ներածական հատվածում ներկայացվել է թեմայի արդիականությունը, աշխատանքի նպատակը և խնդիրները, աշխատանքի օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպված է հետազոտության գիտական նորույթը, ինչպես նաև հիմնավորված է ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը, հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ ***«Մարդկային կապիտալի տեսության տեսամեթոդական հիմնադրույթները»*** գլխում անդրադարձ է կատարվել տնտեսության մեջ ՄԿ-ի դերին, որպես կապիտալի տեսակ այն դիտարկելու պատճառներին, գիտական հիմքերին, համաշխարհային տնտեսագիտական գրականության մեջ առկա բնորոշումներին, ինչպես նաև տրվել է մարդկային կապիտալի էվոլյուցիայի փուլային դասակարգում՝ ըստ զարգացման ժամանակագրության: Այսպես, «մարդկային կապիտալ» եզրույթը դասակարգվել է ըստ հետևյալ փուլերի՝ մինչարդյունաբերական փուլ (մինչև 19-րդ դար), համատարած կրթության փուլ (19-20-րդ դարի առաջին կես), արդյունաբերական փուլ (20-րդ դար), հետարդյունաբերական փուլ (21-րդ դար): Ընդհանրացնելով աշխատանքում քննարկված սահմանումները՝ հեղինակը հանգել է այն եզրակացության, որ ՄԿ-ը ներդրումների միջոցով ձևավորված և կուտակված առողջության, գիտելիքների, ունակությունների, հմտությունների պաշար է, որը նպատակահարմար օգտագործվում է աշխատանքի ընթացքում՝ նպաստելով արտադրողականության և եկամտի ավելացմանը:

Սույն գլխում քննարկվել է նաև «մարդկային կապիտալ» եզրույթը լայն և նեղ իմաստներով, անդրադարձ է կատարվել դրա դասակարգման տարբեր մոտեցումներին, բաղադրիչներին, ինչպես նաև ՄԿ-ի կառուցվածքային տարբերություններին՝ տարբեր մակարդակներում:

Քննարկելով ՄԿ-ի չափելիության աստիճանը՝ ուսումնասիրվել են վերջինիս գնահատման և չափման տնտեսագիտական տարբեր դպրոցների և տեսաբանների մոտեցումները, ինչի արդյունքում առաջ է քաշվել հեղինակի համար առավել ընդունելի մոտեցումը հետագա վերլուծությունների համար: Հետազոտության շրջանակում հեղինակն

ուսումնասիրել է, թե գնահատման ինչ մեթոդ է կարելի դնել ՄԿ-ի գլոբալացման հիմքում և հանգել է այն եզրակացության, որ գնահատման ամենաընդունելի տարբերակը Թ. Միթզեի առաջարկած բանաձևն է[1], որը ներառում է միգրացիայի և աշխատաշուկայի ցուցանիշները: Այսպես, մարդկանց շարժունությունը կախված է ծագման և նշանակման երկրների միջև սպասվող եկամտի, աշխատաշուկայի պայմանների, ՄԿ-ի մակարդակների տարբերություններից: Թ. Միթզեն հետևել է Ջ. Հարիսի և Մ. Տոդարոյի մոդելին, որը հիմնված է ծագման և նշանակման երկրների սպասվող եկամուտների միջև առկա տարբերությունների և աշխատանք գտնելու հավանականությունից բխող անհատի տնտեսական վարքագծի տարբերությունների վրա: Համաձայն այս մոդելի՝ ծագման երկրում սպասվող եկամուտը հավասար է $Y_{ii}^{E}$, իսկ իրական աշխատավարձի մակարդակը՝ i(Yi), աշխատանք գտնելու հավանականությունն է Pr(Empi), որը կարող ենք դիտարկել նաև որպես i երկրում աշխատուժի օգտագործման ֆունկցիա: Համանման նշանակումները կատարվել են նշանակման j երկրի համար: Այս դեպքում անհատը կորոշի տեղափոխվել i երկրից j երկիր, եթե՝

$$Y_{ii}^{E} < Y_{ij}^{E} - C_{ij}$$

որտեղ՝ $C_{ij}$ – ը մի երկրից մյուսը տեղափոխվելու համար կատարված ծախսերն են:

Ատենախոսության երկրորդ՝ ***«Մարդկային կապիտալը համաշխարհային տնտեսությունում»*** գլխում ՄԿ-ի չափելիության ուսումնասիրության նպատակով նախ ներկայացվել են մարդկային կապիտալի (ՄԿՀ) և մարդկային զարգացման համաթվերը (ՄԶՀ), իրականացվել է դրանց համեմատական վերլուծություն՝ ելնելով այդ համաթվերի ցուցանիշների համակարգից, ներկայացվել է դրանց ստեղծման և զարգացման ընթացքը և դրանց տարբերությունները, թերությունները: Այնուհետև քննարկվել են ՄԿ-ի քանակական միտումները համաշխարհային տնտեսությունում՝ ելնելով այդ համաթվերի վիճակագրական տվյալներից: 2020թ. ՄԱԿ-ի կողմից ներկայացված ՄԶՀ-ի վարկանշային աղյուսակի առաջին տասնյակն ունի հետևյալ տեսքը՝

**Աղյուսակ 1: Մարդկային զարգացման համաթվի վարկանշային աղյուսակ ըստ ՄԱԿ-ի[2]**

| ՎԱՐԿԱՆԻՇ | ԵՐԿԻՐ | ՄԶՀ |
|---|---|---|
| 1 | Նորվեգիա | 0.957 |
| 2 | Իռլանդիա | 0.955 |
| 3 | Շվեյցարիա | 0.955 |
| 4 | Հոնկոնգ | 0.949 |
| 5 | Իսլանդիա | 0.949 |
| 6 | Գերմանիա | 0.947 |
| 7 | Շվեդիա | 0.945 |
| 8 | Ավստրալիա | 0.944 |
| 9 | Նիդերլանդներ | 0.944 |
| 10 | Դանիա | 0.940 |

ՀՀ-ը այս աղյուսակում զբաղեցնում է 85-րդ հորիզոնականը 189 երկրների շարքում 0,759 համաթվով[3]: Իսկ Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող ՄԿՀ-ի ցուցանիշով ՀՀ-ն զբաղեցնում է 82-րդ հորիզոնականը 0.58 ցուցանիշով 174 երկրների շարքում: ՄԶՀ-ը որոշակիորեն արտացոլում է երկրի բնակչության կուտակած ՄԿ-ը: Մինչդեռ ՄԿՀ-ն այն քանակական արտահայտությունն է, որը այսօր ծնված երեխան կարող

[1] Mitze, T. (2012), 'A Panel VAR Approach for Internal Migration Modelling and Regional Labor Market Dynamics in Germany'. In: Empirical Modelling in Regional Science. Lecture Notes in Economics and Mathematical Systems, vol 657. Springer, Berlin, Heidelberg, p. 169-179.

[2] United Nations Development Programme: Human Development Index 2020, p.241., https://hdr.undp.org/system/files/documents//hdr2020pdf.pdf. 23 April 2022.

[3] UNDP, https://hdr.undp.org/en/content/latest-human-development-index-ranking **23 April 2022.**

է ակնկալել ձեռք բերել մինչև 18 տարեկանը՝ հաշվի առնելով այն երկրի առողջապահական և կրթական ռիսկերը, որտեղ նա ապրում է:




**Գծապատկեր 1: ՄԿՀ աշխարհի 30 երկրներում 2020թ. ըստ Համաշխարհային բանկի**[4]

Հեղինակի բնորոշմամբ, չնայած բարելավումների՝ ՄԿՀ-ն ունի որոշակի թերություններ, որոնցից, թերևս, ամենակարևորը, տվյալների անհամադրելիությունն է և անհամապատասխանությունը տարբեր երկրների միջև: Այն ցույց չի տալիս իրավիճակը տնտեսության ներսում՝ ըստ տարածաշրջանների և թույլ չի տալիս կոնկրետ քայլեր ձեռնարկել առանձին տնտեսությունների համար: Քայլերը համընդհանուր են մատնանշվում և հաշվի չեն առնում երկրի առանձնահատկությունները: Ժամանակակից պայմաններում միայն կրթության, առողջապահության և կենսամակարդակի ցուցանիշները բավարար չեն աշխարհի տարբեր երկրներում ՄԿ-ի չափը որոշելու համար, ուստի առաջարկվել են նշյալ համաթվերի կատարելագործման ուղիները, մասնավորապես՝ մշակվել է ՄԿՀ բանաձևային նոր մեթոդ: Առաջարկվում է ցուցանիշների ցանկում ներառել նաև տվյալ երկրի գործազրկության մակարդակը, աշխատաշուկայում ներգրավվածության մակարդակը, աշխատուժի թերօգտագործման մակարդակը, մեկ շնչին ընկնող ազգային եկամուտը, համացանցի հասանելիության համաթիվը, սոցիալ-տնտեսական անհավասարության համաթիվը, գենդերային անհավասարության համաթիվը: Ցուցանիշներն ընտրված են՝ ելնելով դրանց և ՄԿ-ի միջև առկա կոռելյացիոն կապերից: Բավական է հաշվարկել, թե ինչպես են այս ցուցանիշները ազդում անձի արտադրողականության վրա, որպեսզի չխաթարվի համաթվի հաշվարկի մեթոդաբանության հիմնական սկզբունքը՝ այն է՝ համաթիվը պետք է ընկած լինի 0-1 միջակայքում (Համաշխարհային բանկը դա արդեն իսկ անում է իր կողմից ընտրած ցուցանիշների համար): Արդյունքում կստացվի ՄԿ-ի վերաբերյալ առավել համապարփակ տեղեկություն պարունակող ցուցանիշ:

Սույն գլխում անդրադարձ է կատարվել նաև ժամանակակից աշխարհի մարդկային կապիտալին, դրա որակական փոփոխություններին, զարգացման միտումներին, սեռատարիքային կառուցվածքին:

Երրորդ՝ ***«Մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում տնտեսության գլոբալացման պայմաններում»*** գլխում ներկայացվել է մարդկային կապիտալի գործոններն ընդգրկող հիմնական ոլորտների մանրամասն ուսումնասիրություն, այսինքն՝ նկարագրվել են ՀՀ առողջապահության, կրթության և սոցիալական համակարգերը, դրանցում առկա բացերը, խնդիրները, դրական կողմերը, վիճակագրական տվյալները: Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ ՀՀ-ում խոցելի կետեր

[4] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից ՀԲ տվյալների բանկի հիման վրա, https://databank.worldbank.org/source/human-capital-index. 23 April 2022.

կան ՄԿ-ի հետ կապված բոլոր ոլորտներում: Մասնավորապես, հետազոտության շրջանակներում՝ ՀՀ ՄԿ-ի մոբիլության և գլոբալացման տեսանկյունից, կարևորվել է աշխատաշուկայի ցուցանիշները, միգրացիոն գործընթացները, կրթության ոլորտը, աղքատության կրճատումը, բարեկեցության ապահովումը ՀՀ բնակչության համար:

Աղյուսակը 2-ը արտացոլում է, թե ինչ պատկեր են ունեցել ՄԿՀ բաղադրիչները ՀՀ-ում վերջին տարիներին: Աղյուսակում ներառվել է նաև 2020թ. Նորվեգիայի ցուցանիշները՝ որպես ՄԿՀ-ով աշխարհի առաջատար երկիր, ցույց տալու համար, թե ինչի պետք է ձգտի հասնել ՀՀ-ն:

Ժամանակակից տնտեսագիտությունը համապարփակ տեղեկույթ է պարունակում միգրացիայի «ձգող և քաշող» գործոնների մասին, սակայն նույնը չի կարելի ասել այն մասին, թե ինչպես է միգրացիան ազդում դոնոր և ռեցիպիենտ երկրների աշխատաշուկաների և ՄԿ-ի վրա:

Ս. Ֆանը և Օ. Ստարկը[5] պնդում են, որ տեսականորեն երկրում մնացած աշխատուժի եկամուտների վրա ՄԿ-ի միգրացիան բացասաբար է ազդում, քանի որ հեռանում է որակյալ աշխատուժը և ընկնում է ընդհանուր աշխատանքի արդյունավետությունը: Լ. Շկուֆլիչը և Վ. Վուչկովիչը[6] ցույց են տալիս, որ էմիգրացիան հանգեցնում է գործազրկության մակարդակի բարձրացման, եթե նրանք ովքեր հեռանում են երկրից զբաղվածների շարքին են դասվում և եթե մնացած աշխատուժի և գնացած աշխատուժի որակավորման միջև ճեղքվածքը մեծ է: Ըստ Բ. Էլների[7] էմիգրացիայի ազդեցությունը եկամտի վրա մեծապես կախված է աշխատուժի որակավորումից և քանակից: Բարձր որակավորում ունեցող աշխատողների զանգվածային միգրացիան կնվազեցնի բոլորի աշխատավարձերը, քանի որ տնտեսությունն ընդհանուր առմամբ դառնում է պակաս արդյունավետ:

**Աղյուսակ 2: ՀՀ Մարդկային կապիտալի ինդեքսը 2017-2020 թթ.[8]**

| | ՀՀ 2017թ. | ՀՀ 2018թ. | ՀՀ 2020թ. | Նորվեգիա 2020թ. |
|---|---|---|---|---|
| Մարդկային կապիտալի ինդեքս | 0,572 | 0,581 | 0,578 | 0,771 |
| Մինչև հինգ տարեկանն ապրելու հավանականություն | 0,9874 | 0,9869 | 0,9876 | 0,9974 |
| Աճի խանգարումներ ունեցող երեխաները մինչև 5 տարեկան երեխաների շարքում | 0,906 | 0,906 | 0,906 | 0 |
| Չափահասների գոյատևման ցուցանիշ | 0,8815 | 0,8835 | 0,8858 | 0,9446 |
| Ուման սպասվող տևողություն (տարի) | 11,09 | 11,38 | 11,27 | 13,67 |
| Ներդաշնակեցված թեստերի միավորների (բալեր) | 443 | 442,96 | 442,96 | 513,58 |
| Ուսումնառությամբ ճշտգրտված ուման տարիներ | 7,86 | 8,07 | 7,99 | 11,23 |

Դոնոր երկրների աշխատաշուկայի և ՄԿ-ի վրա միգրացայի ազդեցության վերաբերյալ գրականությունը շարունակում է մնալ թերի: Միջազգային ընդգրկում ունեցող մի շարք ուսումնասիրություններ պնդում են, որ երկարաժամկետ հեռանկարում զանգվածային միգրացիան կարող է հանգեցնել ինչպես ուղեղների արտահոսքի, այնպես էլ ներհոսքի[9]: Շատ հաճախ դրա վնասակար ազդեցություններն ավելի շատ են ընդգծվում,

[5] Fan, C. S. and O. Stark (2007), 'International migration and "educated unemployment"', Journal of Development Economics, Elsevier, vol. 83(1), pp. 76-87.

[6] Škuflić, L. and Vučković, V. (2018), 'The effect of emigration on unemployment rates: the case of EU emigrant countries', Economic Research-Ekonomska Istraživanja, 31:1, 1826-1836, https://doi.org/10.1080/1331677X.2018.1516154.

[7] Elsner, B. (2015), 'Does emigration increase the wages of non-emigrants in sending countries?', IZA World of Labor, 2015: 208 https://doi.org/10.15185/izawol.208, 15.05.2022.

[8] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից Համաշխարհային բանկի տվյալների հիման վրա.

[9] Beine, M., Docquier, F. and Rapoport, H. (2008), 'Brain drain and human capital formation in developing countries: Winners and losers', Economic Journal, 118(528), 631-652. https://doi.org/10.1111/j.1468-

քան դրականները՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ հմուտ աշխատողների արտագաղթը կարող է վնասակար լինել զարգացման համար[10]: Այս ուսումնասիրությունները փաստում են, որ միգրացիան կարող է հատկապես վնասակար լինել զարգացող երկրների համար: Այսպիսով, արտագաղթը, հավանաբար, էական ազդեցություն կունենա ՄԿ-ի մակարդակի և կազմի վրա, հետևաբար՝ վերջինիս աճի ներուժի վրա[11]:

Հետազոտության մեջ դրված խնդրից ելնելով՝ ՄԶՀ-ի և ՄԿՀ-ի մեջ ներառված ցուցանիշներից առավել նշանակալի է համարվել կրթության միջին տարիների քանակը, քանի որ ուսումնասիրությունը պետք է հանգի ՄԿ-ի միջազգայնացմանը: Այս տեսանկյունից ոչ այնքան կարևոր են դառնում մինչև 5 տարին ապրելու հավանականությունը, առողջ աճը, ներդաշնակեցված թեստերի արդյունքները կամ չափահասների ապրելիության ցուցանիշը: ՄԿ-ի միջազգայնացման առումով առավել կարևոր է կրթությունը բնութագրող ցուցանիշները: Միգրացիայի և ՄԿ-ի փոխազդեցությունը գնահատելու համար համաշխարհային ժամանակակից գրականությունը առավել հաճախ ընտրում է Յունեսկոյի կողմից հաշվարկվող կրթության միջին տարիների քանակը (բացառությամբ այն տարիների, որոնք ծախսվել են որևէ տարվա կուրսը կրկնելու համար), իսկ ավելի կոնկրետ 25 տարեկանից բարձր ազգաբնակչության կրթության միջին տարիների քանակը, քանի որ աշխատուժի միգրացիան ընդգրկում է հատկապես այդ տարիքային խումբը:

Միջին աշխատավարձը հաշվարկվում է ազգային հաշիվների վրա հիմնված ընդհանուր աշխատավարձը բաժանելով ամբողջ տնտեսության մեջ աշխատողների միջին թվի վրա, որն այնուհետև բազմապատկվում է մեկ լրիվ դրույքով աշխատողի միջին շաբաթական ժամերի և բոլոր աշխատողների միջին կանոնավոր շաբաթական ժամերի հարաբերակցությամբ:

Ինչպես արդեն նշվել է, ՄԿ-ի միջազգայնացման տեսանկյունից կարևոր է գնահատել աշխատաշուկայի ցուցանիշները, ուստի ընտրվել են ՄԿ-ի հետ առնչվող 2 ցուցանիշ: Առաջինը աշխատաշուկայում ներգրավվածության ցուցանիշն է, որը հաշվարկվում է Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից: Այս ցուցանիշը տվյալ երկրի աշխատունակ տարիքի բնակչության կազմում աշխատուժի մասնաբաժինն է՝ արտահայտված տոկոսով (զբաղվածներ, գործազուրկներ, տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն): Աշխատուժ ասելով հասկանում ենք աշխատունակ տարիքի զբաղվածներին և գործազուրկներին: ԱՄԿ-ն հաշվարկում է այս ցուցանիշը տարբեր տարիքային խմբերի համար: Քանի որ առավել հաճախ միգրացիան ընդգրկում է 25-ից բարձր տարիքի անձանց, ուստի ընտրվել է 25 և ավելի տարիքի բնակչությունը:

ՄԿ-ի հետ կապված աշխատաշուկայի հաջորդ ցուցանիշը աշխատուժի թերօգտագործման է, որը ևս հաշվարկվում է ԱՄԿ-ի կողմից: Այս ցուցանիշը բնութագրում է ոչ միայն գործազուրկ բնակչության չբավարարված առաջարկը, այլ նաև աշխատունակ բնակչության մյուս խմբերի՝ զբաղվածների և աշխատուժից դուրս բնակչության չբավարարված առաջարկը: Վերը թվարկված պատճառներով հաշվարկի մեջ օգտագործվել է այս ցուցանիշը 25 և ավելի տարիքի բնակչության համար:

Վերջին 2 ցուցանիշները ընտրվել են, քանի որ պարունակում են համապարփակ տեղեկություն՝ ներառելով և՛ աշխատուժի, և՛ զբաղվածության, և՛ գործազրկության

0297.2008.02135.x

[10] Clemens, M. (2016), 'Losing our minds? New research directions on skilled emigration and development', International Journal of Manpower, 37, issue 7, pp. 1227-1248.

[11] Di Maria, C. and E. Lazarova (2012), 'Migration, Human Capital Formation, and Growth: An Empirical Investigation', World Development, Elsevier, vol. 40(5), pp. 938-955.

ցուցանիշները, այսինքն՝ աշխատաշուկան բնութագրող բազում ցուցանիշներից առավել կիրառական են վերլուծության համար: Ընտրված ցուցանիշների վերաբերյալ ՀՀ իրավիճակը ակներև ներկայացված է աղյուսակ 3-ում:

ՄԿ-ի միջազգայնացման համատեքստում անդրադարձ է կատարվում այն գաղափարին, որ միգրացիան կարևոր գործիք է ՀՀ ՄԿ-ի մոբիլության համար: Միգրացիայի ազդեցությամբ ՄԿ մոբիլության ամբողջական պատկերը նկարագրելու համար հաշվի է առնվել նաև միգրացիայի ազդեցությունը աշխատաշուկայի ցուցանիշների վրա՝ աշխատավարձի մակարդակների, աշխատաշուկայի ներգրավվածության և աշխատուժի թերօգտագործման վրա, քանի որ ՄԿ կուտակումը միտված է աշխատաշուկայում ներգրավված լինելուն, մարդկային կապիտալը արդյունավետ օգտագործելուն և եկամուտ կուտակելուն: Իրենց հերթին աշխատավարձների տարբերությունները, աշխատաշուկայի պայմանների տարբերությունները, աշխատաշուկայում ներգրավվածության և աշխատուժի օգտագործման մակարդակների տարբերությունները աշխատուժի և ՄԿ-ի շարժունության դրդապատճառներ են: Աշխատավարձերի տարբերությունները ծագման և պոտենցիալ նշանակման երկրներում ձգող դրդապատճառ են հանդիսանում միգրանտի համար փոխել իր կեցության վայրը՝ հաշվի առնելով առկա ճեղքվածքը: Աշխատուժի թերօգտագործման մակարդակների միջև առկա ճեղքվածքը դրդող պատճառ է հանդիսանում միգրանտի համար, եթե այն ավելի մեծ է ծագման երկրում: Աշխատաշուկայում ներգրավվածության մակարդակի հետ կապված կարող ենք դիտարկել երկու տարբերակ: Մի կողմից բարձր ներգրավվածությունը խոսում է ակտիվ աշխատաշուկայի մասին, որը կարող է գրավել միգրանտների, մյուս կողմից, ծագման երկրում ներգրավվածության բարձր մակարդակը խոսում է այն մասին, որ այդ շուկան արդեն իսկ բավականին հագեցած է և աշխատուժը պետք է աշխատանք գտնի այլ վայրում:

Այսպես, ՄԿ-ի մոբիլության համատեքստում կարևորվել է միգրացիայի և ՄԿ-ի փոխազդեցությունները: Սակայն իրավիճակի վրա մեծապես ազդում են ծագման և նշանակման երկրների աշխատաշուկաների պայմանները, մասնավորապես՝ աշխատավարձի մակարդակները, աշխատաշուկայում ներգրավվածության ցուցանիշը և աշխատաշուկայի թերօգտագործման ցուցանիշը:

**Աղյուսակ 3: Զուտ միգրացիայի, ՄԿ-ի, աշխատավարձների, աշխատաշուկայի ներգրավվածության և աշխատուժի թերօգտագործման ցուցանիշները ՀՀ-ում 2010-2021թթ.**

| Տարեթիվ | Զուտ միգրացիա (հզ մարդ) | ՄԿ (տարի) | Աշխատավարձ ($, տարի) | Աշխատաշուկայում ներգրավվածություն (%) | Աշխատուժի թերօգտագործում (%) |
|---|---|---|---|---|---|
| 2010 | -31.99 | 11 | 3,298 | 62.5 | 37.5 |
| 2011 | -29.21 | 11.19 | 3,479 | 62.9 | 36.1 |
| 2012 | -28.73 | 11.25 | 3,377 | 63 | 34.9 |
| 2013 | -28.26 | 11.26 | 4,292 | 63 | 34.2 |
| 2014 | -27.76 | 11.74 | 4,569 | 62 | 36.1 |
| 2015 | -27.28 | 11.57 | 4,308 | 60.5 | 36.7 |
| 2016 | -26.80 | 11 | 4,358 | 59.8 | 34.5 |
| 2017 | -26.33 | 11.19 | 4,421 | 59.2 | 34.6 |
| 2018 | -25.84 | 11 | 4,291 | 56.5 | 35.3 |
| 2019 | -25.36 | 11.8 | 4,564 | 57.1 | 35.3 |
| 2020 | -12.83 | 11.33 | 4,652 | 54.3 | 35.3 |
| 2021 | -12.83 | 11.39 | 4,866 | 54.7 | 35.3 |

Հեղինակի կողմից ներմուծվել է հավասարումների համակարգ, որը ցույց է տալիս միգրացիոն հոսքերի ազդեցությունը ՄԿ-ի և աշխատաշուկայի վրա: Հավասարումների

նման համակարգը, նպատակահարմարությունից ելնելով, հաշվարկել է Պանելային վեկտորային ավտոռեգրեսիոն մոդելի (Panel Vector Autoregressive Model) միջոցով (այսուհետ՝ PVAR): Անհերքելի փաստ է, որ ՄԿ-ի միջազգայնացման առաջին ուղին միգրացիան է իր տարբեր դրսևորումներով, ուստի անհրաժեշտ է հասկանալ միգրացիայի և ՄԿ-ի փոխազդեցությունը, ինչը խորապես անհնար է ուսումնասիրել առանց միգրացիայի և աշխատաշուկայի պայմանների փոխհարաբերությունների ուսումնասիրության:

Այսպես՝ PVAR մոդելն ունի հետևյալ տեսքը՝

$$\Delta MNET_{ij,t} = \alpha_{10} + \alpha_{11} * (L)\Delta MNET_{ij,t-1} + \alpha_{12} * (L)\Delta W_{ij,t-1} + \alpha_{13} * (L)\Delta LF_{ij,t-1} + \alpha_{14} * (L)\Delta LU_{ij,t-1} + \alpha_{15} * (L)\Delta HC_{ij,t-1} + \varepsilon_{ij,t}$$

որտեղ ցուցչային փոփոխականներ ij-ն վերաբերում են i և j երկրների համապատասխան փոփոխականների լոգարիթմական տարբերություններին, t-ն ժամանակի ցուցիչն է, L-ը՝ լագի արժեքը, MNET-ը՝ տվյալ երկրի զուտ միգրացիոն հոսքերն են, W-ն՝ իրական աշխատավարձը, LF-ը՝ աշխատուժի ներգրավվածության մակարդակը (ՀՀ ՎԿ-ն այս ցուցանիշը թարգմանում է որպես աշխատաշուկայում մասնակցության աստիճան), LU-ն՝ աշխատուժի թերօգտագործման մակարդակը, HC-ը՝ ՄԿ-ը:

Ատենախոսության մեջ ՀՀ-ն դիտարկվել է որպես ծագման երկիր, իսկ որպես նշանակման երկրներ ընտրվել են այն երկրները, որոնք ձգում են ՀՀ միգրանտներին: ՀՀ միգրանտների համար թիրախ հանդիսացող երկրներից շատերը չունեն տվյալներ, առ այն, թե քանի հայ է ապրում տվյալ երկրում, ունենալու դեպքում էլ, բնականաբար, դա կլիներ ոչ հավաստի տվյալ, քանի որ մեր հայրենակիցներից շատերը ապրում են այլ երկրներում ոչ օրինական հիմքերով: ՀՀ վիճակագրական կոմիտեն ներկայացրել է, թե որ երկրներ են հիմնականում մեկնում հայերը, սակայն սա ևս հիմք չէ, քանի որ հետազոտության թիրախում աշխատանքային միգրացիան է: ՀՀ-ից գրանցված միջպետական տեղաշարժերի առաջին հնգյակում է, օրինակ Վրաստանը, սակայն գաղտնիք չէ, որ հայերը Վրաստան մեկնում են ոչ թե աշխատանքային միգրացիայի, այլ իրենց հանգիստը կազմակերպելու նպատակով, ուստի ուսումնասիրության համար ընտրվել են ցանկում առկա այնպիսի երկրներ, որոնք իրենց զարգացվածության մակարդակով և վերոնշյալ ցուցանիշներով զգալի գերազանցում են ՀՀ-ին, և բնականաբար ձգում են հայերի աշխատանքային միգրացիայի տեսանկյունից: Դրանք են՝ ԱՄՆ-ն, Ռուսաստանը, Գերմանիան, Ֆրանսիան, Նիդերլանդները, Իսպանիան, Պորտուգալիան:

Ուսումնասիրությունն իրականացվել է 2010-2020թթ. համար, որի ընթացքում տեղ գտած իրադարձությունների արդյունքում (օրինակ Քովիդ-19, պատերազմ) ժամանակային շարքի ստացիոնարության ստուգման անհրաժեշտություն է առաջացել: Շարքերի ստացիոնարության հարցը ավելի հստակ պարզելու համար իրականացվել է Ֆիշերի միավոր արմատի ընդլայնված Դիքի-Ֆուլերի թեստ (ADF Unit Root Test) յուրաքանչյուր փոփոխականի համար: Արդյունքում պարզ է դարձել, որ փոփոխականների մի մասը չի համապատասխանում ստացիոնարության պայմանին: Այս խնդրի կարգավորման համար հաշվարկը կատարվել է ցուցանիշների աճի տեմպերի առաջին կարգի դիֆերենցիալների հիման վրա, որի արդյունքում բոլոր ցուցանիշները համապատասխանել են ստացիոնարության պայմանին: Մյուս պայմանը, որին պետք է բավարարի մոդելը կայունությունն է, որի ստուգումն իրականացնելու արդյունքում պարզվել է, որ բնութագրիչ բազմանդամի հակադարձ արմատների բացարձակ արժեքները փոքր են 1-ից:

Հեղինակը անդրադարձել է մոդելի լագի կառուցվածքին՝ ելնելով մի քանի չափանիշներից: Կատարվել է լագի ընտրություն՝ ելնելով Ակայկեյի, Շվարցի և Հաննան-Քուինի չափանիշներից (աղյուսակ N 4):

**Աղյուսակ 4: Վեկտորային ավտոռեգրեսիայի լագի ընտրության չափանիշները**[12]

| VAR Lag Order Selection Criteria | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Endogenous variables: DMNET DWAGE DLU DLFP DHC | | | | | | |
| Exogenous variables: C | | | | | | |
| Sample: 2010 2020 | | | | | | |
| Lag | LogL | LR | FPE | AIC | SC | HQ |
| 0 | -12.85906 | NA | 1.61e-06 | 0.850431 | 1.057297 | 0.926256 |
| 1 | 56.73029 | 119.2960 | 1.95e-07 | -1.272871 | -0.031678 | -0.817925 |
| 2 | 86.66244 | 44.18556 | 1.62e-07 | -1.507735 | 0.767785 | -0.673667 |
| 3 | 116.5014 | 36.94342 | 1.48e-07 | -1.738160 | 1.571687 | -0.524970 |
| 4 | 205.0685 | 88.56711* | 9.60e-09* | -4.765165* | -0.420991* | -3.172854* |

| VAR Residual Serial Correlation LM Tests | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Null hypothesis: No serial correlation at lag h | | | | | | |
| Lag | LRE* stat | df | Prob. | Rao F-stat | df | Prob. |
| 1 | 67.37282 | 25 | 0.0000 | 3.152174 | (25, 135.2) | 0.0000 |
| 2 | 57.96931 | 25 | 0.0002 | 2.620717 | (25, 135.2) | 0.0002 |
| 3 | 55.22312 | 25 | 0.0005 | 2.471829 | (25, 135.2) | 0.0005 |
| 4 | 20.02236 | 25 | 0.7457 | 0.790857 | (25, 135.2) | 0.7479 |
| *Edgeworth expansion corrected likelihood ratio statistic. | | | | | | |

Ինչպես տեսնում ենք, բոլոր չափանիշները մատնանշում են ընտրել 4-րդ լագը: Սակայն անհրաժեշտ է եղել գնահատել նաև մոդելի սխալներում ավտոկոռելյացիայի առկայությունը: Դրա համար կատարվել է վեկտորային ավտոռեգրեսիայի մնացորդային հաջորդական ավտոկոռելյացիայի թեստ (VAR Residual Serial Correlation LM Tests): Արդյունքում պարզ է դարձել, որ 1-ին, 2-րդ, 3-րդ լագերում հավանականության 0-ական հիպոթեզը մերժվում է, իսկ 4-րդ լագի համար՝0,74 հավանականությամբ հաստատվում: Ուստի ընտրվել է 4-րդ լագը:

Իրականացվել է Գրենջեր պատճառահետևանքային թեստ (Աղյուսակ N 5), որն օգնել է հասկանալ, թե որքանով են փոփոխականները միմյանց բացատրում: Համաձայն 0-ական վարկածի X փոփոխականը չի բացատրում Y փոփոխականի վարքագիծը: Թեստի արդյունքում պարզ է դարձել, որ միգրացիան և միջին աշխատավարձի մակարդակը ամենալավը բացատրվում են աշխատուժի թերօգտագործմամբ, աշխատուժի թերօգտագործումը՝ միգրացիայով, աշխատաշուկայում ներգրավվածությունը՝ ՄԿ-ով, ՄԿ-ն աշխատուժի թերօգտագործմամբ և միջին աշխատավարձի մակարդակով: Ընդհանուր մակարդակներում թեստը ցույց է տալիս, որ ընտրված փոփոխականները բացատրում են միմյանց: Մասնավորապես, զուտ միգրացիայի և աշխատավարձի մակարդակի վրա ազդում է աշխատուժի թերօգտագործումը, աշխատաշուկայում ներգրավվածության վրա՝ մարդկային կապիտալը, աշխատուժի թերօգտագործման վրա՝ զուտ միգրացիան,

[12] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից Eviews ծրագրային փաթեթի միջոցով.

մարդկային կապիտալի վրա՝ աշխատավարձի մակարդակն ու աշխատուժի թերօգտագործում: Այսպես, թվարկված փոփոխականները ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում են միմյանց վրա:

**Աղյուսակ 5: Գրենջեր պատճառահետևանքային թեստ[13]**

| VAR Granger Causality/Block Exogeneity Wald Tests | | | |
|---|---|---|---|
| Sample: 2010 2020 | | | |
| Dependent variable: DMNET | | | |
| Excluded | Chi-sq | df | Prob. |
| DWAGE | 1.893041 | 4 | 0.7554 |
| DLU | 9.746257 | 4 | 0.0449 |
| DLFP | 2.459471 | 4 | 0.6519 |
| DHC | 4.402040 | 4 | 0.3543 |
| All | 15.15005 | 16 | 0.5137 |
| Dependent variable: DWAGE | | | |
| Excluded | Chi-sq | df | Prob. |
| DMNET | 0.751176 | 4 | 0.9449 |
| DLU | 20.46579 | 4 | 0.0004 |
| DLFP | 2.695106 | 4 | 0.6101 |
| DHC | 5.797847 | 4 | 0.2148 |
| All | 40.10568 | 16 | 0.0008 |
| Dependent variable: DLU | | | |
| Excluded | Chi-sq | df | Prob. |
| DMNET | 83.69932 | 4 | 0.0000 |
| DWAGE | 1.253835 | 4 | 0.8692 |
| DLFP | 1.226620 | 4 | 0.8737 |
| DHC | 6.469064 | 4 | 0.1668 |
| All | 104.0686 | 16 | 0.0000 |
| Dependent variable: DLFP | | | |
| Excluded | Chi-sq | df | Prob. |
| DMNET | 4.991365 | 4 | 0.2882 |
| DWAGE | 2.810186 | 4 | 0.5901 |
| DLU | 6.395651 | 4 | 0.1715 |
| DHC | 11.74739 | 4 | 0.0193 |
| All | 92.77622 | 16 | 0.0000 |
| Dependent variable: DHC | | | |
| Excluded | Chi-sq | df | Prob. |
| DMNET | 0.495204 | 4 | 0.9740 |
| DWAGE | 13.16432 | 4 | 0.0105 |
| DLU | 15.33180 | 4 | 0.0041 |
| DLFP | 1.576132 | 4 | 0.8131 |
| All | 57.13773 | 16 | 0.0000 |

[13] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից Eviews ծրագրային փաթեթի միջոցով.

Մոդելի գնահատումից հետո կատարվել է ազդակների և արձագանքների վերլուծություն, այսինքն անդրադարձ է կատարվել ֆունկցիայի իմպուլսային բնութագրին (այսուհետ՝ IRF) և Քոլեսկիի փոփոխականների սխալի բաշխման կանխատեսմանը (այսուհետ՝FEVD): Այս վերլուծության արդյունքում ցուցադրվել է, թե մոդելում ներառված փոփոխականներում 1 ստանդարտ շեղման չափով փոփոխությունները՝ ազդակները, ինչպիսի ազդեցություն են ունենում մոդելում և, թե ինչպես են ընտրված փոփոխականները արձագանքել միմյանց ստանդարտ շեղման շոկերին, այն դեպքում, երբ մնացած փոփոխականները մնացել են հաստատուն: Վերլուծությունը կատարվել է իմպուլսային արձագանքների միջոցով և դրա շեղումների տարրալուծման Քոլեսկիի մեթոդի միջոցով: Գծապատկեր 2-ը ցույց է տալիս ստանդարտ շեղման չափով ազդակները և արձագանքները: FEVD-ն ցույց է տալիս, թե ինչքանով են համակարգում ընդգրկված փոփոխականները բացատրվում համապատասխան կովարիատներով: IRF-ը ցույց է տալիս, թե ինչպես փոփոխականները կարձագանքեն տվյալ փոփոխականի ստանդարտ շեղման շոկին, եթե մնացած փոփոխականները մնան հաստատուն:

Մասնավորապես տվյալ հետազոտության համար կարևոր է 3 տեսակի IRF՝

- Ընդունող և ծագման երկրի ցուցանիշների և կրթության ցուցանիշի ճեղքվածքների ազդեցությունը զուտ միգրացիոն հոսքերի շոկերի կամ ազդակների վրա,
- Զուտ միգրացիայի ազդեցությունը վերը թվարկված մնացած փոփոխականների վրա,
- Վերը թվարկված փոփոխականների ազդակների ազդեցությունը ընդունող և ծագման երկրների ՄԿ-ի ճեղքվածքների վրա:




**Գծապատկեր 2: Ստանդարտ շեղման չափով արձագանքները[14]**

Այսպես, մոդելից պարզ է դարձել, որ մեծ է միգրացիայի արձագանքը աշխատուժի թերօգտագործման նկատմամբ: Մասնավորապես, միգրացիայի փոփոխությունը 1-ին տարում պայմանավորված չէ ոչ մի փոփոխականի ստանդարտ շեղմամբ, 5-րդ տարում աշխատուժի թերօգտագործման ճեղքվածքի ստանդարտ շեղման 1 աստիճանի փոփոխությունը հանգեցնում է զուտ միգրացիայի փոփոխության 30.6%-ով, 10-րդ տարում՝ 31.3%-ով:

[14] Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից Eviews ծրագրային փաթեթի միջոցով.

## Աղյուսակ 6: Ստանդարտ շեղման չափով արձագանքների տարրալուծման Քոլեսկիի մեթոդ

| Variance Decomposition of DMNET: | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Period | S.E. | DMNET | DWAGE | DLU | DLFP | DHC |
| 1 | 18.73934 | 100.0000 | 0.000000 | 0.000000 | 0.000000 | 0.000000 |
| 5 | 34.21808 | 58.15983 | 6.013602 | 30.60058 | 0.690367 | 4.535624 |
| 10 | 64.62220 | 51.37551 | 6.252144 | 31.30659 | 3.287797 | 7.777959 |
| Variance Decomposition of DWAGE: | | | | | | |
| Period | S.E. | DMNET | DWAGE | DLU | DLFP | DHC |
| 1 | 0.082243 | 2.783563 | 97.21644 | 0.000000 | 0.000000 | 0.000000 |
| 5 | 0.153789 | 5.106212 | 58.08049 | 24.17597 | 0.434747 | 12.20258 |
| 10 | 0.272473 | 27.82180 | 21.89513 | 25.92418 | 6.569649 | 17.78923 |
| Variance Decomposition of DLU: | | | | | | |
| Period | S.E. | DMNET | DWAGE | DLU | DLFP | DHC |
| 1 | 0.090169 | 14.71340 | 7.457572 | 77.82902 | 0.000000 | 0.000000 |
| 5 | 0.124511 | 19.22247 | 7.955418 | 59.03900 | 0.331728 | 13.45138 |
| 10 | 0.320709 | 41.84208 | 3.705664 | 39.55653 | 1.369172 | 13.52656 |
| Variance Decomposition of DLFP: | | | | | | |
| Period | S.E. | DMNET | DWAGE | DLU | DLFP | DHC |
| 1 | 0.010787 | 2.097356 | 0.131774 | 0.493342 | 97.27753 | 0.000000 |
| 5 | 0.041598 | 13.85535 | 4.977367 | 18.81609 | 55.01883 | 7.332361 |
| 10 | 0.075503 | 25.84152 | 3.888906 | 12.01021 | 52.34292 | 5.916438 |
| Variance Decomposition of DHC: | | | | | | |
| Period | S.E. | DMNET | DWAGE | DLU | DLFP | DHC |
| 1 | 0.028976 | 3.911768 | 0.057155 | 0.710205 | 4.284250 | 91.03662 |
| 5 | 0.091364 | 0.881742 | 3.294271 | 46.37254 | 9.770542 | 39.68090 |
| 10 | 0.191089 | 25.43682 | 7.552117 | 38.41379 | 5.018680 | 23.57860 |
| Cholesky Ordering: DMNET DWAGE DLU DLFP DHC | | | | | | |

Վերլուծությունը թույլ է տալիս հասկանալ, որ միգրացիայի 1 աստիճան ստանդարտ շեղման ազդեցությունը ծագման և ընդունող երկրների աշխատուժի թերօգտագործման ճեղքվածքի վրա 1-ն տարում կազմում է 14.7%, 5-րդ տարում՝ 19.2%, 10-րդ տարում՝ 41.8%: ՄԿ-ի ճեղքվածքը պայմանավորված է ծագման և նշանակման երկրների միջին աշխատավարձների մակարդակի և աշխատուժի թերօգտագործման 1 աստիճան ստանդարտ շեղմամբ՝ 1 տարի անց համապատասխանաբար՝ 0.05%-ով, 0.7%-ով, 5 տարի անց համապատասխանաբար 3.2%-ով, 46.3%-ով, 10 տարի անց համապատասխանաբար՝ 7.5%-ով, 38.4%-ով:

Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունները հեղինակին թույլ են տվել կատարել հետևյալ **եզրահանգումներն ու առաջարկությունները:**

➢ ՄԿ-ը, անցնելով ժամանակագրական որոշակի փուլերով և ենթարկվելով զարգացման էվոլյուցիայի՝ ժամանակակից աշխարհում հստակ ամրապնդել է իր տեղը՝ որպես կապիտալի մի յուրահատուկ տեսակ, առանց որի հնարավոր չէ պատկերացնել տնտեսության կայուն զարգացումը: Այդ իսկ պատճառով, հատկապես այնպիսի երկրները, որոնք արդյունաբերապես զարգացած չեն, ունեն աշխարհագրական անբարենպաստ դիրք, կանգնած են տնտեսական և քաղաքական տարաբնույթ մարտահրավերների առաջ (ինչպիսին է օրինակ ՀՀ-ն), պետք է «ձեռքը պահեն զարկերակի վրա» ՄԿ-ը որակապես բարելավելու և կուտակելու տեսանկյունից: Այս ճանապարհին երկրները բախվում են մի քանի խնդրի՝ սկսած ՄԿ-ի ստեղծումից մինչև կուտակում:

ՄԿ-ի ստեղծման և կուտակման համար հեղինակն առաջարկում է զարգացնել ՄԿ-ի բաղկացուցիչներն առանձին՝ ՀՀ-ում կիրառելով պետական կարգավորման նոր գործիքներ, որի դեպքում հաշվի կառնվեն ՄԿ-ի զարգացման, զբաղվածության և միգրացիոն քաղաքականության փոխառնչությունները: Մասնավորապես՝ ՄԿ-ի արտահոսքերի կանխարգելման համար անհրաժեշտ է պետական աջակցության ծրագրեր իրականացնել, կամ միջազգային վարկային և դրամաշնորհային միջոցներ ներգրավել՝ ուղղված աշխատանքային միջավայրի բարելավմանը, ակտիվ զբաղվածության ապահովմանը: Ընդ որում, ՄԿ-ի զարգացմանն ուղղված ծրագրերը անհրաժեշտ է ներառել ՀՀ միջնաժամկետ ծախսերի ծրագրում կոնկրետ քայլերի իրականացման նպատակով: Առողջապահական համակարգում ներդրումները և պետական բյուջեից հատկացումները պետք է մշտապես լինեն մեր կառավարության ուշադրության կենտրոնում: Առաջարկվում է ոլորտի ռազմավարական գերակայությունների մեջ ներառել նաև կանխարգելիչ բժշկությունը: Կրթության ոլորտում պետք է ամբողջովին նոր ռազմավարություն մշակել, որն իր արդյունքները կտա հաջորդ սերնդի համար (մոտ 30 տարի անց): Կրթությունը կարելի է դարձնել առավել հասցեական՝ մասնագետներ ներգրավելով անհրաժեշտ մասնագիտությունների գծով (քիմիա, ֆիզիկա, մաթեմատիկա)՝ ավարտելուց հետո ուսանողներին տալով աշխատանքով ապահովելու երաշխիքներ: Սոցիալական ոլորտում ևս անհրաժեշտ է ներգրավել ֆինանսական միջոցներ աղքատության կրճատման, բնակչության բարեկեցության ավելացման համար: Մեր երկրում ծրագրերը հիմնականում բնակչության խոցելի խմբերին են ուղղված, այն էլ շատ չնչին ֆինանսական միջոցների տրամադրմամբ: Իսկ խթանող միջոցառումները շատ քիչ են: Առաջարկվում է ավելացնել մոտիվացնող սոցիալական միջոցառումները:

➢ Մեկ այլ խնդիր է ՄԿ-ի կուտակումը, քանի որ մի բան է ՄԿ-ը ստեղծելը, այլ բան է այն տվյալ երկրում պահելը և կուտակելը: ՄԿ-ը ընդլայնելու համար նախ պետք է գաղափար ունենալ դրա չափի մասին, իսկ ՄԿ-ի յուրահատուկ բնույթից ելնելով՝ այն բավականին դժվար է չափել: Մինչ օրս չկա ՄԿ-ի գնահատման միասնական մոտեցում: Առավել տարածված մոտեցումները, ինչպիսիք են ՄԱԿ-ի կողմից հաշվարկվող ՄՀՀ-ն կամ ՀԲ-ի կողմից հաշվարկվող ՄԿՀ-ն ունեն բազմաթիվ թերություններ, որոնցից ելնելով էլ միևնույն երկրի ՄԿ-ի ցուցանիշները այս 2 սանդղակներում միմյանցից տարբերվում են: Հեղինակը հանգել է այն եզրակացության, որ պետք է ընդլայնել ՄԿ-ի չափման բանաձևային մեթոդները՝ ներառելով ոչ միայն կրթության, առողջապահության կամ սոցիալական պաշտպանության ցուցանիշներ, այլև աշխատաշուկան բնութագրող ցուցանիշներ (օրինակ աշխատուժի թերօգտագործում, աշխատաշուկայում ներգրավվածություն), միգրացիան բնութագրող ցուցանիշներ (օրինակ՝ զուտ միգրացիա), տվյալ երկրի տեխնոլոգիական զարգացվածության ինդիկատորներ (օրինակ՝ համացանցի հասանելիության աստիճան, տեխնոպարկերի թվաքանակ, վենչուրային կապիտալի առկայություն), սոցիալական ՄԿ-ը

գնահատող գործիքներ (օրինակ միջին գործարքային ծախսեր) և այլ ցուցանիշներ, որոնք այս կամ այն չափով բնութագրում են երկրում առկա ՄԿ-ը:

- ՄԿ-ի միջազգայնացման համատեքստում որակավորված աշխատուժի միգրացիան հետզհետե ավելի ու ավելի կարևոր տեղ է սկսում զբաղեցնել գլոբալ տեղաշարժերի մեջ: Միգրացիայի այս տեսակի հոսքեր դեռևս առավելապես աչքի են ընկնում զարգացած երկրներում, որոնք արդեն իսկ սկսել են մշակել ռազմավարական քայլեր իրենց երկիր որակավորված աշխատուժի մուտքը խթանելու համար: Բազմամյա փորձը, կուտակած վիճակագրական տվյալները նրանց հնարավորություն են ընձեռել հասկանալ դրա տնտեսական դրական հետևանքներն իրենց պետություններում: Ինչ վերաբերում է զարգացող երկրներին, այդ թվում, ՀՀ-ին, ապա այստեղ առաջնային խնդիր է ուղեղների արտահոսքի խոչընդոտումը, հետո միայն օտարերկրյա որակավորված աշխատուժի ներգրավումը: Ինչպես ցույց են տալիս վարկանշային կազմակերպությունների փորձագիտական գնահատականները, ՀՀ տնտեսության զարգացման խոչընդոտներից մեկը երկրի մտավոր ռեսուրսների արտահոսքն է: Արդյունքում, երկիրը կանգնել է ազգային մտավոր կապիտալի կուտակմանն ու վերարտադրմանն անհրաժեշտ կրիտիկական շեմին, որն արգելակում է գիտական և տնտեսական բարեփոխումների գործընթացը:

ՄԿ-ի միջազգայնացման գործիքը ՄԿ-ի միգրացիան է, ուստի անհրաժեշտ է գնահատել ՄԿ-ի և միգրացիայի ազդեցությունները, որոնք անհնար է վերլուծել առանց «ձգող» և «քաշող» գործոնները հաշվի առնելու: Վերջիններս մեծապես կապված են աշխատաշուկայի ցուցանիշների հետ: Ներմուծելով պանելային վեկտորային ավտոռեգրեսիոն մոդել (pVar), գնահատելով ՀՀ ՄԿ-ի միգրացիայի վրա ազդող ցուցանիշների համակարգը ՀՀ և ռեցիպիենտ երկրների համար, հաշվարկելով այդ ցուցանիշների՝ միգրացիայի վրա ունեցած ազդեցության ժամանակային լագը և վերլուծելով ՄԿ-ի, միգրացիայի, աշխատուժի միջին աշխատավարձների, աշխատաշուկայում ներգրավվածության և աշխատուժի թերօգտագործման փոխառնչությունները՝ հեղինակը բացահայտել է, որ միգրացիայի փոփոխությունները հիմնականում բացատրվում են աշխատուժի թերօգտագործման փոփոխությամբ, միջին աշխատավարձների ճեղքվածքը բացատրում է ՄԿ-ի ճեղքվածքի փոփոխությունները, աշխատուժում ներգրավվածության ցուցանիշը 10 տարվա ընթացքում վերոնշյալ փոփոխականների վրա չի ազդում, սակայն դրա վրա ազդում է ՄԿ-ի փոփոխությունը, աշխատուժի թերօգտագործման ցուցանիշը բացատրում է ՄԿ-ի, միգրացիայի, աշխատավարձի մակարդակի փոփոխությունները, միգրացիան իր հերթին ազդում է աշխատուժի թերօգտագործման վրա: Միաժամանակ նշված փոփոխականների ցրվածքի մեծ մասը բացատրվում են իրենց իսկ տատանումներով:

Այսպես՝ հետազոտությունը ցույց է տալիս, որ աշխատաշուկայի ցուցանիշները, ՄԿ-ը և միգրացիան ունեն փոխառնչություններ, որոնք պետք է հաշվի առնել ՄԿ-ի գլոբալացումը ի նպաստ ՀՀ տնտեսական աճին օգտագործելու համար: Խելամիտ քաղաքականության մշակման դեպքում ՄԿ-ի մոբիլությունը կարող է բերել տնտեսական օգուտներ, դրական ազդեցություններ և նպաստել ՀՀ-ի բարեկեցությանը:

**Հետազոտության առանցքային դրույթները հրատարակվել են ատենախոսի հետևյալ գիտական հոդվածներում.**


1. Sharon Chekijian, Knarik Yedigaryan, Alexander Bazarchyan, Gevorg Yaghjyan & Sona Sargsyan, «Continuing Medical Education and Continuing Professional Development in the Republic of Armenia: The Evolution of Legislative and Regulatory Frameworks Post Transition» // Journal of European CME, Published online: 09 Dec 2020, Volume 10, 2021 - Issue 1, https://doi.org/10.1080/21614083.2020.1853338:
2. Եդիգարյան Ք., «Բարձր որակավորում ունեցող աշխատուժի միգրացիայի տնտեսական հետևանքները միջազգային տնտեսության դոնոր և ռեցիպիենտ երկրների համար» // «ՀՀ տնտեսության զարգացման առաջնահերթությունները. ներքին և արտաքին մարտահրավերներ» ՀՊՏՀ 28-րդ գիտաժողովի նյութեր, Երևան 2021, էջեր 423-434, https://library.asue.am/open/gitajoxov_28_3.pdf?fbclid=IwAR0IwjiFd8OVZiEFavtzMrHMAZA0mvjxlb5FyZg4celN3m6DGTi3TImgbGc
3. Եդիգարյան Ք., «Մարդկային կապիտալի որակական միտումները համաշխարհային տնտեսությունում» // «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ գիտական հոդվածների ժողովածու» 1 (6), Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի Երևանի մասնաճյուղ, Երևան, 2022թ., էջեր 261-271: https://www.rea.ru/ru/org/branches/erevan/Documents/Sbornik-1(6).pdf
4. Եդիգարյան Ք., «Մարդկային կապիտալի գնահատման մեթոդաբանության հիմքերը» // «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ գիտական հոդվածների ժողովածու» 1 (6), Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի Երևանի մասնաճյուղ, Երևան, 2022թ., էջեր 271-286: https://www.rea.ru/ru/org/branches/erevan/Documents/Sbornik-1(6).pdf
5. Գալոյան Դ., Եդիգարյան Ք., «Մարդկային կապիտալի և մարդկային զարգացման համաթվերը՝ որպես մարդկային կապիտալի չափման գործիքներ» // «Բանբեր ՀՊՏՀ», Երևան, 2022.3, էջեր 9-28: https://dspace.asue.am/server/api/core/bitstreams/c7c741e9-ba88-41c4-8629-e1fdd2cc3dd5/content
6. Mayilyan F., Yedigaryan K., «The Evolution of Human Capital Theory» // ALTERNATIVE quarterly academic journal, pp. 68-79: http://dx.doi.org/10.55528/18292828-2022.4-68
7. Yedigaryan, K., «Analysis of the Globalization of Human Capital on the Example of the Republic of Armenia» // Messenger of Armenian State University of Economics, 1(73), 2023, pp. 73-86: https://asue.am/upload/files/science/banber/2023-year-1/7.pdf
8. Едигарян К. К., «Анализ структурных аспектов и принципов классификации человеческого капитала»// «Новая наука» Международный центр научного партнерства, Международные научные чтения, Сборник статьей III Международной научно-практической конференции, г. Петрозаводск, 4 сентября 2023г., стр. 83-95, https://sciencen.org/assets/Kontent/Konferencii/Arhiv-konferencij/KOF-859.pdf
9. K. Yedigaryan, «Human Capital Outlook in Armenia» // International Scientific Conference for PhD Students, Grigol Robakidze University, Tbilisi, Georgia 2022

**Едигарян Кнарик Карленовна**

**Основные проблемы развития человеческого капитала в контексте интернационализации экономики Республики Армения**

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 00.06 - «Международная экономика».

Защита диссертации состоится 4-го июля 2024г., в $15^{00}$, на заседании Специализированного совета КВОН РА 014 по экономике, действующего при Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Налбандяна 128.

## Резюме

Развитие ведущих стран мира привело к формированию постиндустриальной экономической системы, основанной на знаниях, инновациях, глобальных информационных системах, новом качестве образования, новых технологиях. Одним из главных элементов новой экономики - человеческий капитал (далее – ЧК), который является важным фактором социально-экономического развития современного общества.

Высокая роль ЧК, расширение его структуры и функций, превращение из фактора общественного развития в ведущий производственно-социальный фактор привели к необходимости формирования новой концепции, так как в отличие от других факторов производства, которые меняют количественные и качественные свойства под воздействием научно-технического прогресса, но остаются прежними по содержанию, ЧК также меняется по существу и сам активно способствует генерации новых знаний. Соответственно, трансформируется представление о сущности и роли ИК XXI века. В эпоху информационных революций необходимость накопления и развития интеллектуальной собственности отражается в приоритетах экономической политики развитых стран, которые постепенно уделяют все больше внимания образованию и здравоохранению населения.

Республика Армения, как непромышленная страна с бедными природными ресурсами и географически неблагополучным положением, должна опираться на ЧК как на основу своего экономического развития, поскольку от качества и эффективности ЧК зависит конкурентоспособность экономики в современном мире. Если в прошлом веке ведущие корпорации мира были промышленными гигантами, то сегодня в первой десятке доминируют гиганты в сфере информационных технологий.

Наконец, тема актуальна с точки зрения международной мобильности ЧК. Поскольку РА является страной-экспортером ЧК, необходимо изучить какие последствия несет экономика от утечки ЧК.

Проведенные анализа международной мобильности ЧК и количественные измерения его последствий могут быть полезны в процессе разработки политики, направленной на развитие самого ЧК и для реализации реформ в сфере образования, здравоохранения и социальной защиты. Результаты исследования создают возможность разработать миграционную политику на благо экономики РА, а также регулировать институциональную среду рынка труда с целью предотвращения эмиграции квалифицированной рабочей силы.

**Цель и задачи исследования.** Цель исследования - выявить проблемы развития человеческого капитала в РА в контексте глобализации мировой экономики, выяснить взаимодействия человеческого капитала и миграции.

Для достижения вышеуказанной цели были поставлены следующие задачи:

- исследовать сущность человеческого капитала и эволюцию термина «человеческий капитал»,
- обсудить виды человеческого капитала и подходы классификации,
- исследование методологических основ оценки человеческого капитала,
- выявить тенденции количественного и качественного развития человеческого капитала в мировой экономике,
- обсудить вопросы развития человеческого капитала в РА,
- определить перспективы развития человеческого капитала в РА в условиях глобализации мировой экономики,

проанализировать роль ЧК в процессе интернационализации экономики РА.

**Научная новизна исследования:** Из результатов, полученных на основе проведенных исследований и анализов, в качестве научных новизн мы выделили следующие:

- Проведен сравнительный анализ коэффициентов человеческого развития и человеческого капитала, на основе которого разработана новая методика расчета коэффициента человеческого капитала.
- Для РА и стран-реципиентов была оценена система показателей, влияющих на миграцию человеческого капитала РА.
- Оценены степень влияния разрыва между экономическими показателями РА и стран-реципиентов на миграцию человеческого капитала РА и влияние миграции человеческого капитала на разрыв в средней заработной плате, разрыв в недоиспользовании человеческого капитала, разрыв в участии на рынке труда и разрыв в размере человеческого капитала между РА и странами-реципиентами.
- Был оценен разрыв между человеческим капиталом РА и стран-реципиентов обусловленный различиими в доходах, недоиспользованием рабочей силы и уровнем участия на рынке труда в краткосрочной и долгосрочной перспективе.

**Knarik Karlen Yedigaryan**

**The Study of Human Capital Development Challenges in the Context of Internalization of the Economy of the Republic of Armenia**

Abstract of the thesis for receiving the scientific degree of PhD in economics in the field 00.06 - "International Economics"

The defense of the thesis will take place on July 4th 2024 at $15^{00}$ o'clock, at the session of Specialized Council of Economics of 014 HESC RA in the Armenian State University of Economics:

128 Nalbandyan Str., Yerevan 0025, RA.

**Resume**

The development of the leading countries of the world has led to the formation of a post-industrial economic system based on knowledge, innovation, global information systems, a new quality of education, and new technologies. One of the main elements of the new economy is human capital (hereinafter referred to as HC), which is an important factor in the socio-economic development of modern society.

The role of HC, the expansion of its structure and functions brings a necessity of the formation of a new concept, In comparison with other factors of production that change quantitatively and qualitatively but remain the same in terms of content, HC changes in essence generate new knowledge. Accordingly, the idea of the essence and role of HC in the 21st century is being transformed. In the era of the information revolution, the need to accumulate and develop HC is reflected in the economic policy priorities of the developed countries, which are gradually paying more attention to education and public health.

The RA is not a leading industrial country, it has no access to the sea, and has an unfavorable geographical position, so we should rely on HC as the basis of our economic development, since the competitiveness of the economy in the modern world depends on the quality and efficiency of HC. If in the last century the world's leading corporations were industrial giants, today the top ten is dominated by information technology giants.

Finally, the topic is relevant from the point of view of the international mobility of the HC. Since the Republic of Armenia is a country exporting HC, it is necessary to study what consequences the economy suffers from the drain of HC.

The study of the international movement of HC can be useful in the process of HC developing policies, implementing reforms in the areas of education, health care and social protection. The results of the work give an opportunity to develop a migration policy in the interests of the RA economy.

**Purpose and objectives of the study.** The purpose of the study is to identify problems of human capital development in the Republic of Armenia in the context of globalization of the world economy, to clarify the interaction of human capital and migration. The following tasks were set to achieve the above-mentioned goal:

- to investigate the essence of human capital and the evolution of the term "human capital",
- discuss types of human capital and approaches to classification,
- study of methodological bases of estimation of human capital,

- to identify trends in quantitative and qualitative development of human capital in the world economy,
- to discuss the issues of human capital development in RA,
- determine the prospects of human capital development in RA in the conditions of globalization of the world economy,
- analyze the role of human capital in the process of internationalization of the RA economy

**The scientific novelty of research:** During the research several results have been recorded of which we can mention the following scientific novelties:

- A comparative analysis of the coefficients of human development and human capital was carried out, on the basis of which a new method for calculating the coefficient of human capital was developed.
- For the Republic of Armenia and the recipient countries, a system of indicators affecting the migration of the human capital of the Republic of Armenia was assessed.
- The influence of the gap between the economic indicators of the Republic of Armenia and the recipient countries on the migration of the human capital of the Republic of Armenia and the impact of human capital migration on the average wage gap, the gap in the underutilization of human capital, the gap in participation in the labor market and the gap in the amount of human capital between the RA and recipient countries was assessed.
- The gap between the human capital of the Republic of Armenia and the recipient countries due to differences in income, underutilization of the labor force and the level of participation in the labor market in the short and long term was assessed.